



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 19

ՏՈՒՐԱԹ

6 ՄԱՅԻՍ 1906

Կ. ՊՈԼՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 ՂԸ.

Վեցամսեայ 25 »

ԳԱԽԱՌԱՅ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 ՂԸ.

Վեցամսեայ 27 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

Տարեկան 42 Ֆր.

Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը յանճարարուին ինչպէս նաեւ ՉԵՆԻԹԵ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանճարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՉԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հատոր 40 փաթա

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՄԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت صریه مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքսի Թիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի , ոտի ու ոտի եւ նեղի
փանգաւայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը , հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՄԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐՅԱՆԻՆ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐՍ | (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱՆԱԹԱ | (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 . |
| ՍԱԻՏԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւղօղլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրուած 1860 իւնի վիճակ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՎ

Դրամագումար եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻԻՎ

Դրամագումար եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և կարասիք :

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կեանքի վրայ :

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե- նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է Քրիստի ԼիՕնէ , Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Ղխագոր Աերկայացուցիչ

Գ. Ֆ Է Ր Ա Տ Ե Ա Ն



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 19

ՇԱՔԱԹ

6 ՄԱՅԻՍ 1906

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Շ Ը Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Զ Պ Զ
Ռ Ս Վ Տ Ր Ց Փ
Ք Օ Ֆ

Կը յանձնարարենք մեր ընթերցողներուն վերոյիշեալ «այբ, բեն, գիւնի ցու-
ցակին» մէջ մատը պտտցունել առանց վրան նայելու եւ կանգ առնել գրի մը վրայ, ու
յետոյ այդ որոշեալ գիրը փնտռել «ՎԻՃԱԿ» ի ոտանաւորներուն մէջ (Էջ 296—297)
որով կը սկսի իր ոտանաւոր—վիճակը:

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԼՌՈՒԹԻՒՆԸ

Ուշագրութիւն կ'ընէ՞ք բնաւ թէ՛ Ուսումն. Խորհուրդը մեր վարժարաններուն կրթական ծրագիրը կը բարեփոխէ ամէն ուրբաթ օր. հինգ-վեց ամիսէ ի վեր շարունակ «Ժողովը զբաղեցաւ ծրագրին սա՛ կամ նա կէտին վերաքննութեամբ» : Ի՞նչ վերաքննութիւն, կամ ի՞նչ կերպով վերաքննութիւն, կամ յառաջիկային ներմուծութիւն կրթական նորութիւնները որո՞նք են, ձայն չկայ ասոնց մասին, Ժողովը վերաքննութիւնը իրեն կը վերապահէ մինչեւ որ ժամանակը գայ և մեր վարժարաններուն պարտաւորիչ ըլլայ վերաքննուած ծրագիր մը :

Այս ուղիստուկութենէն մենք բան մը չենք հասկնար : Սխալ քայլ մըն է ասիկա, զոր կ'առնէ Ուսումն. Խորհուրդը, մեզմէ թաքուն պահելով ինչ որ բացայայտ ճշմարտութիւնը պիտի ըլլայ ի մօտոյ, այսինքն ուսումն. ծրագրին գործադրութիւնը : Ո՛վ գիտէ որքան կրկնաքննելի կէտեր պիտի մատնանշուին Ուսումն. Խորհուրդին այդ վերաքննուած ծրագրին մէջ : Լաւագոյն չէ՞ր այժմէն լուսաբանուիլ, լաւագոյն չէ՞ր որ վերաքննելի կէտերը պարզուէին ուսուցչական յանձնաժողովի մը առջեւ, որ կրնար իր կարգին լուսաւորել Ուսումն. Խորհուրդին միտքը, որ խրատի պէտք ունի, որքան ալ ուշիմ ըլլայ : Սկիզբէն ի վեր արդէն տեսակ մը արուեստակութիւն տեսնուեցաւ Ուսումն. Խորհուրդին վերաքննութեան եղանակին մէջ : Նախ

ուզեց տեսուչներուն և մէկ-երկու մասնագէտներուն կարծիքները առնել գըրաւորապէս, բայց այդ կարծիքները ա՛յնքան բաց էին իրարմէ որ Խորհուրդը վերջ ի վերջոյ որոշեց ծալլել մէկ կողմ՝ դնել զանոնք, առանց այլ եւս ուրիշները մտերմացնելու իր Խորհրդակցութեանց, և կամ «զբաղի սա՛ կամ նա կէտին վերաքննութեամբ, և որոշեց . . .» եւլն. : Գոնէ ինք իր որոշածները հրատարակէր : Գործադրութեան հետ մի և նոյն ժամանակ հրատարակութիւնը իր բաղձացուած արդիւնքը չի կրնար ունենալ : Եւ ասոր հետեւանքը՝ սա՛ կ'ըլլայ թէ մեր կրթական ծրագիրը, որ հիմա դառն երկունքի մը մէջ է, առարկայ պիտի դառնայ քննադատութիւններու, աւելի կամ նուազ արդարացուած : Եւ յետոյ, Ուսումն. Խորհուրդը իր իրաւասութեան սահմանէն անցած կ'ըլլայ, երբ թոյլ տրուի իրեն որ իր գաղափարներուն համեմատ միայն վերաքննուի մեր կրթական ծրագիրը : Դասագիրքերու խնդիրը մէջտեղն է :

Առաջները երբ Ուսումն. Խորհուրդին գիրք մը ներկայացուէր վաւերացման համար, անոր քննութեան պարագաներուն վրայ քիչ շատ մանրամասնութիւններ կը տրուէին, ա՛յն մըտօք թէ ո՛վ է քննիչը, ի՞նչ առաւելութիւններ կամ թերութիւններ մատնանիշ եղած են, եւլն. : Ուսումն. Խորհուրդը յետոյ սկսաւ առարկել թէ այս գրութիւնը սա՛ անպատեհութիւններ ունի որ ներկայացնող հեղինակը կրնայ ազդեցութիւն բանեցնել ծանօթ քննիչին կամքին և դատաստանին վերայ, ուստի որոշեց չհրատարակել քննիչին անունը և հեղինակին ալ չյայտնել զայն : Բայց եկուր տես թէ այս հին

դրութեան հետեւանքը սա՛ եղած է որ ներկայացուած գիրքերուն ամենամեծ մասը հիմա կը մնայ Ուսումն. Խորհուրդին անդամներուն կամ անոնց անմիջական ծանօթ շրջանակին մէջ :

Ուսումն. Խորհուրդը շատ լաւ գործ մը կատարած կ'ըլլար շաբթէ շաբաթ հրատարակութեան տալով կրթական ծրագրի իւր բարեփոխումները , որպէս զի կարելի ըլլար մասնաւոր ակնարկներով գաղափար կազմել ամբողջութեան վրայ : Երկրորդ՝ Ուսումն. Խորհուրդը շատ լաւ գործ մը ըրած կ'ըլլար , կրթական ծրագրին նախորդ հեղինակին հետ խորհրդակցութեամբ կատարելով փոփոխութիւնները : Շատ հաւանական է արդէն որ Ուսումն. Խորհուրդին պատրաստած նոր ծրագիրը Գաղաքական Ժողովին կողմէ ենթարկուի յանձնաժողովի մը քննութեան , որուն նախագահը ըլլայ Պէրպէրեան էֆ. : Գործին տրամաբանական ուղղութիւնն ալ այս է : Այսքան տարիներէ ի վեր փորձուած ծրագիրը , որուն արդիւնքը յոյժ գոհացուցիչ է , դատելով նոյն իսկ Ուսումն. Խորհուրդին ամէն տարուան տեղեկագիրներէն , անխոհմտութիւն է ջուրը նետել գրչի պարզ հարուածներով առանց լրջօրէն խորհրդակցելու նախորդ հեղինակին հետ : Եթէ ծրագիրը նպատակայարմար չէր , ինչո՞ւ ուրեմն ա՛յնքան կը գովուին կը փառաբանուին այդ ծրագրին արդիւնքները ամէն տարի Պատրիարքարանի ընդունելութեանց օրերը :

Մենք անոնցմէ ենք որ կը գնահատեն մեր Ուսումն. Խորհուրդին կրթական գործունէութիւնը , բայց անշուշտ փափաքելի է որ այդ գործունէութիւնը նպատակայարմար ըլլայ մեր նախնական դաստիարակութեան ճշմարիտ և իրական պէտքերուն :

Երկու տարիներու ծանօթ յաւելումին պէտքը լուսաբանուած չէ տակաւին : Մինչեւ հիմակուան փորձառութիւնը ցոյց տուաւ թէ այդ յաւելումը անհրաժեշտ չէր , մանաւանդ ման-

չերուն համար , որոնց լրացուցիչը չունեցանք ցարդ , որովհետեւ չէինք կրնար ունենալ , որովհետեւ տղաքը կա՛մ գործի կ'երթան և կա՛մ իսկոյն երկրորդական վարժարան մը կը մտնեն : Աղջիկներուն Լրացուցիչներն ալ մէջտեղ են , քանի մը տեղեր կատարուած փորձերը չեն արդարացներ բնաւ եղած ծախքերը : Արդ , Ուսումն. Խորհուրդը ի՞նչ հաստատ հիման վրայ դրաւ իր հաշիւները երկու տարի աւելցնելով առհասարակ բոլոր մեր նախնական վարժարաններուն վրայ : Տարակոյս չկայ թէ փորձը ապարդիւն պիտի ելնէ , և պիտի պարտաւորուինք հին կրթական դրութեան դիմում ընել դարձեալ երբ իրականութիւնը կայ յուսախաբ ընէ մեզ : Ասոր համար կ'ըսէինք թէ Ուսումն. Խորհուրդը լաւ բան մը ըրած կ'ըլլար՝ կանխաւ բացատրութիւններ և լուսաբանութիւններ տալով իր ընելիքին կամ ըրածին վրայ :

S.

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ

ՊԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՕՍՄ. ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ԷՅ. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

(Հ Ի Լ Մ Ի)

Պետրոս էֆէնտի Կարապետեանի աստիճանակից ու աթոռակից իբր Ուսումնական Խորհրդոյ անդամ, ունինք առաջնակարգ ուրիշ տաճկաբան մը , Ստեփան էֆ. Կուրտիկեանը (Հ Ի Լ Մ Ի) :

Ահաւասիկ երկու հմուտ տաճկաբաններ , իրենց մէթոտաւոր գիրքերովը եւ իրենց անըսպառ լեզուագիտական եւ կանոնագիտական գանձերովը հռչակաւոր , որոնք բոլորովին նոր բարեշրջում մը բերին մեր դպրոցներու մէջ այս լեզուի դասախօսութեան : Հապա միւսները , Աբիկեան Միհրան էֆէնտին , պիտի ըսեն հիմա ընթերցողներէս անոնք՝ որոնք գիտակ են այս կարող անձին տաճկաբանութեան ալ :

Բայց պէտք է նկատի առնել մեր պայմանները , զորս պարզած ենք մեր ուսումն-

նասիրութեան սկիզբը, այսինքն խօսիլ միայն պաշտօնի վրայ գտնուող ուսուցիչներուն վրայ:

Ահա այս է պատճառը որ միայն այս ԵՐԿՈՒ ականաւոր դէմքերը գտանք տաճկաբաններու Ա. շարքին մէջ դասելու համար:

Ստեփան էֆ. Կուրտիկեան ինքնազարգացման ամենէն գեղեցիկ օրինակը կրնայ նկատուիլ:

Հմուտ է արաբերէն, պարսկերէն եւ թուրքերէն լեզուներու անսպառ գանձերուն, զորս սորված է թուրք մոլլաներէ եւ շէյխերէ, ու յետոյ ինքնօգնութեամբ եւ շարաշար աշխատութեամբ զանոնք կատարելագործած է:

Կուրտիկեան էֆէնտի ուսուցչական գործունէութիւնը կը սկսի իր ծննդավայրէն, Պրուսայէն:

Հոն, արդարեւ իր ուսուցչական կեանքին բեղմնաւոր շրջաններէն մէկը բոլորած է, Պրուսայի յառաջդիմասէր ժողովուրդի կրթական եւ դպրոցական զարգացման մէջ մեծ բարեշրջում մը բերելով:

Տեղւոյն աղգ. Գէորգեան վարժարանին շրջանը հազիւ աւարտած, օսմ.ի օգնական ուսուցչի պաշտօնին կը կոչուի նոյն հաստատութեան մէջ, քիչ յետոյ տնօրէն կը կարգուի վարժարանին:

Ահա այն ատեն է որ գեղեցիկ գաղափար մը կը յղանայ, այն է Գէորգեան վարժարանին մէջ ներմուծել «հայերէն խօսելու» սովորութիւնը:

Երկար դժուարութեանց կը հանդիպի Կուրտիկեան էֆէնտի, բայց զիջքը յատկանշող կամքի ուժովը կը յաջողի այդ ծրագիրը իրագործել, եւ այսօր Պրուսայի մէջ, հայերէն լեզուն գիտցող եւ սահուն կերպով խօսող նոր սերունդը, զորս ինք հասցուցած է, Կուրտիկեան էֆէնտի կը պարտի այդ ամէնը:

Չի մոռնանք յիշել նաեւ թէ՛ Կուրտիկեան էֆ. հայերէն գրաբառ լեզուին ալ տիրացած է, որուն մէջ ունեցած հմտութիւնը աւելի կարծէ քան թէ մեր շատ մը վկայեալ հայկաբաններունը:

Կուրտիկեան էֆէնտի Պոլիս գալով համեստ մանուշակի մը կեանքը կը վարէ, զոր

կը շարունակէ մինչեւ այսօր շուրջ 10-12 տարիէ ի վեր:

Կուրտիկեան էֆէնտի ամէն տեղ դասախօսել չի սիրեր, այդ է պատճառը որ իր ուսուցչական ասպարէզը նեղ չընանակի մը մէջ սահմանափակած է: Կը դասախօսէ միայն Աղգ. Կեդրոնական երկրորդական վարժարանը, եւ Գում-գարուի Մայր, Գատըգիւղի եւ Բանկալթիի Մխիթարեանց, եւ Բերայի Ս. Լուսաւորչեան վարժարանները:

Կուրտիկեան էֆէնտի մէթոտը իսկատիպ է, ո՛չ թրքական հին մեթոտական է, ո՛չ ալ վերջին նորագոյն մանկավարժականը, այլ այն որ ուսանողին մէջ եռանդ մը եւ սէր մը կը ծնցնէ դէպ ի այդ հեշտաւոր լեզուն:

Իրաւ է թէ քիչ մը խիստ է իր դասախօսութեանց մէջ, բայց այդ ալ ներքի է իրեն, երբ նկատի առնենք իր դասախօսած ճիւղին էական կարեւորութիւնը մեր մատուց սերունդին:

Իր օրուան այժմէութիւններով եւ սրամտութիւններով համեմուած յուշատետրը որ լեցուն է պարսկ. եւ արաբերէն ինքնագիր ոտանաւորներով, սիրուն քառեակներով, նոր փայլ մը կուտայ իր անէքտոտաւոր դասախօսութեանց:

Իր գրական գործունէութիւնը կը կայանայ թուրք եւ հայ թերթերու մէջ հրատարակած յօդուածներուն եւ քանի մը տրպուած ու ձեռագիր գործերուն մէջ:

Իր տպուած գործերէն յիշենք «Օսմ. տաղաչափութիւն»-ը, որ տեսակին մէջ մէկ հատիկ է: «Հայեղի ներքին ասացումներ», որ անձնական դիտողութիւններով եւ բացատրութիւններով ճոխացած է, «Կիւլջեկի ի ետէպ» պարսկ. ինքնագիր բանաստեղծութեան հատոր մը, որ միսթիք շունչով մը պարուրած է: Իր ձեռագիր աշխատութիւններէն մեզ ծանօթ է իր «Թուրք գրականութեանց պատմութիւն»-ը, եւ «արաբերէնի սարք»-ը թուրք լեզուով, որոնցմէ կը դասախօսէ:

Ասոնցմէ դուրս յիշատակութեան արժանի են իր մասնագիտական յօդուածները, գրական կտորները, եւ թուրք Արաբերէն ու Պարսկերէն ոտանաւորները, զորս հոս

հոն ցրուած է թուրք պարբերականներու մէջ, եւ մանաւանդ «իգսամ»-ի մէջ:

Կուրտիկեան էֆէնտի արժանացած է նաեւ Դ. Կարգի մեծ խնայելի պատուանշանին:

Ահա սուղ տողերու մէջ մեր այս երկու հոյակապ տաճկաբաններու կենսագրական գիծերը: Նշանակելի պարագայ մըն է մանաւանդ իրենց՝ մէկ մէկու հանդէպ ունեցած եղբայրական սէրն ու համակրանքը որ կրնայ օրինակ ըլլալ ամէն անոնց, որոնք հսկափական հաշիւներ կընեն նոյն իսկ կըրթական գործին մէջ:

Կը խոստովանինք թէ «Հանրագիտակ»-ի այս էջերը անբաւական են զիրենք՝ իրենց ամբողջութեանը մէջ ներկայացնելու, բայց կը յուսանք թէ օր մը կամ իրենց տալիսներէն ոմանք, եւ կամ թէ ուրիշ մը մասնաւորապէս կուսումնասիրէ զիրենք եւ իրենց ամբողջական կենսագրականները կուտայ մեզի:

Լ Ե Ի Ո Ն

ՄԵԼԱՆԻ ԲԻԾԵՐ

Թերխաշ լեզուի մը անուշ նօթը կար խմբագրութեանդ «Թուրքերան» հրաւերին մէջ, որ կը կաթկթի երկու շրթունքներու մէջէն ... խորիսխէ մ'աւելի համեղ:

Բայց երբ «մուտքի ճառ» մը կը փորձեմ ալա Սօլախտան, միտքս անհարկի կերպով կանկ առնել կուտայ ինձ կէտի մը վրայ:

Պատմեմ: ... Օր մը պապա թորիկ եւ Մարգա տուտու — հազիւ լուած իրենց ալեանք — ծնունդ տուած էին պտտիկի մը, — հիմակ ամուսնութիւնները կանխաձեռնով կսկսին — բարեծաղիկի՝ մը, ինչպէս պիտի ըսէիք: Անոնք քիթ քիթի նստած չքեղ boudoir-ին մէջ կը ծրագրէին երազներ, անկիւնը՝ պզտիկը կուլար, կը ճչէր. խռճած էրիկ մարդու նմանակ 60 նոց կնիկ մը՝ նէննի՝, նէննի՝ կըսէր: Ի զո՛ւր: Աղուոր երիտասարդուհիի բոլոր հրապոյրներով ու յօժարութիւններով ինքզինքս տրամադրեցի ատոր nourrice ըլլալ: Բայց փափկօրէն ճամբայ դրին զիս քանի մը ժամէն, դեռ սակայն Քիւնիւքեան կենցաղագիտութիւնը չէր ի լոյս եկած: Հիմա երբ կըսկսիմ «Հանրագիտակ»-ի մէջ նոյն դերը, սեռիս իրական պահանջումով, կերեւակայեմ բոլոր այն drôle ծամածուրթիւնները որ պիտի պատեն չուրջս:

Բոլոր անոնք որ իրենց մենաշնորհ ըրած

են tout prêt իրենց ապրանքին գլուխը՝ պիտի գոչեն on est prié de ne pas confondre d'un autre charlatan qui est venu s'établir en face: Թօլայեան իր այն expression-ին մէջ, որ պիտի ունենար, գրպանած իր յօդուածագինը «Մանգումէ»էն, երազկոտ իր բոլոր շահատակութիւններուն ծրագրով, կամուրջէն անդին՝ կորսնցնէր իր դրամապանակը, կամուրջի տասնոցն ալ վրայ տալով:

Ալփիար՝ բանագողութեան տաք պարագային Ստեփան Երկանեանի հետ դէմ դիմաց՝ Գօրտէլիօյի երկաթուղիի վակօնին մէջ ունեցած poseր:

Բանագող՝ երբ սխալ ելլէ Պատրիարքարանէն բերած լուրը, — որուն ստացած պատկերը, երկու տարի առաջ «բացառիկ Լոյս»-ի թիւին շնորհիւ ունիմ այս պահուս քիթիս տակ. չեմ գիտեր թէ մինչեւ հիմա աւելի չէնք շնորհքովը քաշել տուած է:

Վահան Փափագեանը՝ իր լուրջ մարդու ձեւին մէջ, ինչպէս ըրաւ Երմոգին — ծօ՛, blanc-bec մ'ալ, ծուի՛կ ...:

Mais qu'inporte, chacun pour soi.

* * *

Չիլիկիրեան որ հաստատեց եռաձայնը՝ կը կարծէ՛ք թէ ամենէն բաղդաւորը եղաւ. օ՛հ, ոչ, գրաւ կը դնեմ, ծիծաղ, հեգնանք, քաշքուկ, վէճ՝ աջ ու ձախէն կսմիթ եւ 10 ոսկիի նուէր մը եւ խոշոր փո՛ւֆ ափեռիւն մը, c'est trop !

Իրմէն վերջը կը ծնի բաղդը բոլոր անոնց՝ որոնք կատարեալ surprise մը ունեցան, տեսնելով այն գնահատականները՝ հնչո՛ւն, թըրի՛նկ ...:

Ինչպէս կը լսենք — եւ արդէն թերթերը պիտի ծանուցանեն — միաձայնի կողմնակիցներ՝ իրենց սկզբունքին դէմ՝ կազմած եռաձայն պատարագին համար վարձատրուած են, այսպէս. Չուլահեան՝ Ենի-գաբուի Թաղ. Խորհուրդին կողմէ՝ փառակազմ, ոսկեզօծ Եկմալեանի ձայնագրեալ տետրը, որպէս զի անոր համեմատ մարգէ իր խումբը, եւ 12 հատ սիլիֆ քրիմից ... Ի հաշիւ մէկ տարուան ամսականներուն, որպէս զի՝ անոր ... որ պիտի սիրէ, զարդարէ վիզը:

Արամ Բերիկեան՝ Պէշիկ-Թաշի Թաղ. Խոր-

խուրդին կողմէ՝ « Գարնան Դայլայիկներ » ու 100 բաժանորդներու ցանկ մը եւ 100 դր... ամսական հանգստեան թոշակ :

Ճէրահեան՝ Պալաթու Թաղ. Խորհուրդի կողմէն՝ « *Allez* » տոմսակ մը *sans retour*՝ Պրուսայի վրայ, հոն ջերմուկներուն մէջ ինքզինքը դարմանելու համար :

Տիար Մէհտէրեանին՝ Երկվեցեակ մը բողբոջական դպիրներու *en group* լուսանկարը, որպէս զի ի հարկին առանց Դէոգինեան լապտերի գտնէ զանոնք, եւ օրհնութեան կոնդակ մը՝ որպէս զի քաջալերուած . . . շաբունակէ Եռաձայնը :

Եւ դեռ Անտոն Արամ կը գրէ, կը վիճի թէ մեր գրագէտները, արուեստագէտները չեն վարձատրուիր, վզվզուկ . . . :

Hors de concours մնացեալ տիրացունե՞րը, Ջայրմայր դպի՞րը, խանէնտէնե՞րը, զուռնահինե՞րը եւ իր սարօքն :

* *

Կըսեն թէ, Գրիգոր Մալ-խաս որ բնաւ չէր կարդար իր քննադատներուն իրեն դէմ գրուածները եւ մի միայն Փրանսական գրականութեան վրայ կը ճառէր, պարապ ժամերուն հիմա հաճոյք կ'զգայ բանալ այն բոլոր քննադատութիւնները՝ զորոնք գրեց Նուպարեանի եւ Ղազիկեանի դէմ՝ ցոյց տալու համար թէ ինք՝ մեր խեղճ երկրագունտը եկած է իբր մե՛ծ քննադատ եւ մե՛ծ թարգմանիչ, եւ ասով անխառն հաճոյք կը պատճառէր միշտ հեռո՛ւն Եկինի մէջ իր վեցհազարեակաւորաց վարժապետին՝ որմէ (Եփրեմ Խուրի) եւ (Նարեկ) սովորած է : Եւ բոլորեցի սեղմ հարուածով մը եւ յաղթական ժպիտով՝ բոլոր անոնց դէմ՝ որ « Միջակորեար » քննադատեցին կըսէ, Չարակոչկո՛ճ, Չարակոչկո՛ճ . . . :

Եւ կըսեն թէ՛, մեղքը վզերնին, իր թարգմանութեան առաջին ձօնը՝ եւո շրկուած է առօք փառօք « ՂԺԽԵՄ, տխեղծ կոյսի մը նման » :

* *

Հին պատմութիւն մը կայ. — Զուարթուն մը բանբեր շրկուեցաւ մեր խոնարհ երկիրը : Բիչ մը մարդկային կիրքերով եւ տարփանքներով յայրատ այդ երկնաբնակը՝

փորձուեցաւ, սիրել աղուորիկ էակ մը, եւ երջանի՛կ անոր հետ, թողւոյ երկինքը եւ անոր բոլոր սուրբ վայելքները : Աստուած ներեց այդ անառակին վրիպումին՝ քանի որ ինք ստեղծած էր՝ կինը :

Այդ օրէն մարդիկ կինը նկատեցին երջանկութիւնը եւ անոր հաճոյքը՝ երանութեան ադամանդեայ ոսկի աղբիւրը : Վերջապէս կինը եղաւ մահկանացուներու կարճ կեանքին մէջ բան մը՝ *pour elle notre coeur bat plus vite* : Եւ սակայն քանին՝ հետապնդած անոր չուքին սիրայօժար կորսնցուցի՛ն իրենց իրական երջանկութիւնը՝ անվերադարձ :

Անոր համար երկցս երջանիկ ամուրի եւ ղէցներ պիտի լքեն իրենց սքեմը « երբ ճար մը չըլլայ սա ամուրի քահանաներու խնդրին » :

Վարդապետներ՝ ընդ միշտ պիտի հրաժարին կոյս հոգիի երազներէ ? Երբ անոնց աշխարհիկ գայթակղութիւնները Կրօն. Ժողովը սկսի « անաչառ քննութեան առնել » :

Սարեաններ եւ Սամարացուհիներ երջանիկ, խնկելի՛ էակներ են քանի որ մինչեւ հինգերորդ ամուսնութեան վայելքները գիտեն :

Ամենաերջանիկ է Հօպսըն նաւային սպան, որ ամբողջ կեանքը անցուց ամենէն աւելի կնոջական համբոյր քաղելու համար (տե՛ս Մանղումէ) : Պարսամեան՝ որ ինքզինքը նուիրեց իր ամենէն սրտագրաւ *romance*ները գրելու, եւ Ս. Դաւիթեան՝ որ անթիւ, անհամար օրիորդներ *interwé* ըրած է իր պաշտօնին ու գործին բերմամբ :

* *

« Բարոյականը՝ անբարոյութիւն է », ըսաւ « ճշմարտութիւն » փիլիսոփան :

Երկիրը կը դառնայ, մենք ալ կը դառնանք, եւ ո՛չ ոք կայ որ կենայ եւ հարցնէ թէ ինչպիսի բան է բարոյական ըսուածը : Հակառակ անոր որ ամէն ոք կը խօսի, կը վիճի անոր վրայ, եւ ալ, դուն ալ, մամիկս ալ, կաթնկեր մանուկներն ալ իրենց ամբողջ ընկաներով, լաց ու կոծերով, այլ նաեւ ժամերուն աքաղաղներն ալ կը փառաբանեն զայն : Զիկայ մէկը որ պատրաստ չունենայ այդ ապրանքէն՝ իր բոլոր գրպանները՝ իբր

Թէ տէրը ըլլար անոր Այվազեան ճոխու-
թեամբ:

Mais, il y a mieux մարդիկ բարոյականի հա-
մար կը ծնին, կապրին, կ'ուսնին, կամուս-
նանան, կը գործեն, կըլլան վաճառական,
փաստաբան, բժիշկ, ուսուցիչ, քահանայ,
թաղական, վարդապետ et vraiment c'est très
drôle !

Բոլոր բարոյալից խրատները, պերճախօս
քարոզները, բարոյ անբարոյ գրուածները,
գրականութիւնները «պօքաչիօն», «նանա»-
ները, «Նստերը իրենց pleinement décollé զգա-
յամով ոտանաւորներով, պատկերներով.
«Քարոզագիրքները, Ալէլուիաները իրենց
հոգեպաշտիկ սլացքներով, ո՛չ կը շինեն, ո՛չ
կը քանդեն բարոյականը, անոնք բոլորն ալ
կը լեցուին անդուլ, միշտ... Դանայեան կա-
րասին մէջ, նոյն իսկ Շէրլօթ Հօլմսի վէպե-
րը՝ որուն մէկ բառը թէեւ մէկ ոսկի կարծե-
լուած է:

Բարոյականի սիրոյն համար, օ՛հ, on se
risque toujours, վարդապետները բարոյականի
մեծ առաքեալները ծնան, Արմաշ մօտան,
քահանայ եւ նոյն իսկ վարդապետ ձեռնադ-
րուեցան, ծով, անապատ, գետ կտրեցին
բարոյական քարոզելու համար:

Թաւանձեան՝ բարոյականի փափուկ սիր-
տը, որպէս զի չի վիրաւորուի, ինքզինքը
ենթարկեց Ալփիարի ձաղկանքներուն եւ նոյն
իսկ յօժարեցաւ խաչել իր սթէռլինները:

Եգիպտոսի Ատենադպիրը, հոյակապ
անձնաւորութիւն որ թաղականի քուէ՝ շահե-
ցաւ, 100 ոսկի վճարեց հրէուհիի մը, որուն
բարոյականը դաշուեալ էր, փորձանք մը զոր
ամէն քսակի եւ ամէն խղճի մատչելի չի կըր-
նար ըլլալ, (տե՛ս Մանգումէ «Տամկաճեանի
թղթակցութիւնը»), եւ դերձակ Փ. ինք-
զինքը Ս. Թաղի տան եօթներորդ յարկէն
վար նետեց բարոյականի համար, եւ երբ կը
տեսնեմ զինքը «յոտն ի մատին» երթալը,
կը յիշեմ մեր ապրած բարոյականը՝ կաղն
ի կա՛ղ, ճղճի՛մ, տխե՛ղծ ...:

ՍԻՐՎԱՐԴ ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Հասակները այլազան են եւ դէմքերը բազ-
մերանգ,
Ասոնք գործեր են բնութեան պէտք չէ հաշ-
ուել անարգանք
Ոմանք բարակ բարձրահասակ, վրանի մը
սիւնին պէս,

Կուգան կ'անցնին քու առջեւէդ քալուած-
քով մը շատ ալ վէս,
Իսկ ոմանք ալ, կարճահասակ, որք ամէն
տեղ կը վըխտան,
Թաթի վրայ կը քալեն յար, որպէս զի քիչ
մը մեծնան:

Երկու խումբն ալ աչքեր ունին, յար բարց-
րացող դէպ երկին,
Լաւ տեսնելու համար դէմի Արաքսին կամ
էօժէնին:

Ասոնց պէխերն միշտ ոլորուած եւ ծայրերը
վեր նային
Դէպի իրենց գանկին կողմը, որ կը մնայ
յաւէտ սին:

Տղաքն օրուան, փողոցին մէջ, միշտ բարց-
րաճայն կը խօսին
Իրենց կողմը դարցընելու համար սիրուն սա
Լիւսին:

Իսկ ծիծաղներն, ծիծաղ ըսի, ծիծաղ չէ
այդ, այլ խնդուք,
Որ լըսողներ կը դրդէ միշտ երեսնուն տալ
մուր ու թուք:

Օրը մէկ ժամ, կամ գէթ կէս ժամ, չեմ
սխալիր, քիչէն քիչ
Մազի մաշան ուժով բռնած մազեր չըտկեն,
դեռ սա հիշ:

Փողկապն հապա, ճերմակ կուրծքը, ո՛րչափ
խլին ժամանակ,
Զդեստներուն եւ գլխարկին կը զարնէ ան
խողանակ,

Զի չըլլայ որ փռչի մը գէթ անոնց վրայ
գըտնուի,
Ինչ փոյթ անոնց, թէ հոգիներն եւ սիրտեր-
նին փոշոտուի,

Արտաքինը պէտք է անոնց անով կընեն դեռ
ինչե՛ր,
Որպէս զի շուտ սա էգերը տան անուշիկ ի-
րենց սէր:

Ահա ասոնքեն լեցընող հրապարակըն սա մե-
րին,
Արտաքինով պոռոտ փայլուն իսկ ներքինով
յաւէտ սին:

Կաբին

Գ. ԿՈՄՍԻ

Վ Ի Ճ Ա Կ

Առնունքը երբ արթննաւ ով դու կին
Այքիս առջեւ կուգայ դիմքդ ժպտագին:

Բարեկամ մը գտնելը շատ դժուար է
Հաւ կրնես դուն, եղածին հետ յարմարէ:

Գեղեցիկ ես ոչ ոք կրնայ ուրանայ
Այդչափ հրպարս պէտք չէ ըլլաւ բայց դուն ալ:

Դրամներուդ երբեք դուն մի դրներ յոյս
Ազնիւ ձիրքեր կը փրկեցնեն ով դու կոյս:

Երագի պէս անցան զացին այն օրեր
Երբ ինք զատ ոչ ոք չէր կը սիրէր:

Զարմանք ըզգաս պիտի գիտնաւ ով օրհորդ
Բայց հաւատաւ մեռած է քու սիրոյդ որդ:

Էջ մ'ալ եթէ դու կարդացիր այն գիրքին
Պիտի' շեղիր քու մայրիկիդ հաւատքին:

Ընդունեցիր ձեռքը քեզի սիրողին
Բայց մոռցաւ քեզ կրկին սիրեց իր օղին:

Թէ անսայիր քու մայրիկիդ խորատին
Կին կ'ըլլայիր լաւ մարդոցնէ մէկ հասին:

Ժամանակին քեզ ըսին կարգուէ,
Բայց անոր տուն չ'ըսին երբեք քու տուն:

Ինկած կրնոջ պիտի խղճաս շիտակը
Երբ պրպրեստ անոր կեանքին յատակը:

Լեւօնի ես ազնիւ օրհորդ գիտնաւ այդ
Սակայն նորէն ինքն կ'ելլաւ ես քու վրայ:

Խնձորի պէս ունիս այտեր կաս կարմիր
Էր կողակից հաւատարիմ անձանձիր:

Տարաւի կամ քէ անօրի երբ ըլլաւ
Տեսնող քաւ է իսկոյն ես կը կըշտանաւ:

Կարգուիլը շատ դիրին է սիրելիս
Դեռ պզտիկ ես մոմի մը պէս կը հալիս:

Հարուս ըլլալ կուգես գիտնաւ ինչ օգուտ
Պիտի' ունենա'ս սակայն վրաս քիչ մը գութ:

Ձեռագործի փափաք ունիս քեզ դուն
Բայց շատ ուշ է դարձած ես ալ մէկ խաբուն:

Ղարիւք հալիս վերջ մը տուն ալ ով օրհորդ
Խօսք հասկցուր քու սիրելի հորդ ու մօրդ:

Ճարմակ կուրծքիդ վրայ դնել գլուխը
Ու ասանկով անձնուն ես ընել խրդ:

Մանուշակի չափ կեանքդ կարճ պիտի' տես
Ինչո՞ւ միտքդ կարգուելու ետէ է:

Յստակ խօսք մի վախճար քէ քեզ կ'ատեն
Ինձնէ զատ շատ մարդ կը ճանչնայ քեզ արդէն:

Նեկիծեցիր ոչինչ ունիս ըսելիք
Բայց հերիք է մ'ըներ քիս ալ խաղալիք:

Շախարհի մէջ ունիս շեղու մը անոյշ
Ամուրիներ քեզ դարձնեն իրենց ուշ:

Ուրկե՛ց եր որ դիմեւ ելար չ'եւ գիտեր
Տկար կողմը շատ լաւ սակայն եւ գրեւ:

Զ'ըսեմ պիտի վստահ եղիր ով աղջիկ
Երբ կուտաս դուն ալ ինծի մեկ պաշիկ:

Պարկեշտութիւն երբ ընտրեւ առաջնորդ
Ամուսին մը կրնաս գտնել ով օրհորդ:

Զնչե մտէր ու ալ մոռցիր իմ պատեր
Կարգադրելիք դեռ ունիմ եւ շատ պատրտէր:

Ռամիկ մ'ըսեւ քո մայրիկիդ խօսքերուն
Շատ կ'օգտուիս երբոր մըսիկ ընես դուն:

Սիրուելու լաւ կերպ մը քեւ գտեր եւ
Բայց պիտի դառնաս կամեց կամեց անտէր:

Վարդ այտերիդ համբոյր մը տա ինձ երբ
Վստահ եղիր քան չի պակսիր գրեթէ:

Տիպար մայր մը գիտեմ ըլլալ կուգես միշտ
Որ քեզ շատ հեռու մընայ ցաւն ու վիշտ:

Բոպէ մ'առաջ քաշե տեսնեմ վիճակիդ
Զերե փեք ... կը գուշակեմ կոր քո հալըդ:

Ցաւով կ'ըսեմ չի վշտանաս աղուորս
Քեզ սիրողներ կը պակսին կոր այս օրս:

Փեսուրի պէս դուն ցատկով հոն ու հոս
Անամուսին պիտի երթաս միեջեւ փոս:

Քաղցըր ձայնիդ երբ կը ըսեմ ի՞նչ որ
Կը մոռնամ շուտ ցաւերս իմ բիրտուր:

Օրորոցին քովը նստէ քո զակիդ
Եւ պիտի տայ երջանկութիւն քո զակիդ:

Ֆանելային պատմութիւնը չի մոռնաս
Երկանքդ հետ ետքը մ'եղար որ չի լսա:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Եթէ մեր մէջ կայ դատակարգ մը՝ որուն
Վրայ այնքան շատ խօսուած ըլլայ, այն ալ
սա երանելի ոսկերիչներն են:

Երէկուան չուշուր գրագէտէն բռնէ՝ մին-
չեւ օրուան վրաս-գրէ երգիծաբանը, քանի
մը սիւնակ գրելիք ունին սա մարդոց վրայ:

Եւ որովհետեւ եւս ալ Ալփիարներու, Կալ-
ուշներու եւ Բանագողներու քով երգիծա-
բան մըն եմ այսօր, ուստի հանդիսաւոր
ուխտս կը կատարեմ ոսկերիչներու վրայ բան
մը գրելով:

Գարիկ աղա, մէկն է այն ոսկերիչներէն,
որոնք ապրիլ 1ին ճշմարիտ կը խօսին, գի-
շերը 13 ժամ կը քնանան, ամէն առտու ե-
կեղեցի կ'երթան, ցորեկները պանիր հաց
կուտեն, Սկիւտար կը նստին, շատ կը քրքու-
նին, շատ կը խօսին, Թաղականցու են, հո-
գաբարձուցու են, եւ էն վերջը քահանայ կը
ձեռնադրուին:

Այս մարդը անչափ կը բարկանայ զնա
մը ըրած ատեն, որ 10 փարա կորսնցուցա-
ծին պէս Թաղին խորհրդարանը կը վազէ:

Սատանան գործ չունի, սա մարդը փոր-
ձելու համար 100 ոսկինոց տուեալ մը կը

կերցնէ յիշեալին, թէ ինչպէ՞ս, հապա լսեցէք պարոնայք:

(Ասացուածք մը՝ որ մարդը անդին չխորհող տօթօրները կրնան գործածել):

Երկու շիբ տիկիներ, թարմ, գիրուկ, աղուորիկ, իրենց պէս լեցունկէկ ձիերէ լածուած luxei կառք մը նստած շիտակ մեր հանրածանօթ բժիշկներէն մէկուն դուռը ափ կ'առնեն:

Դուռը բացող սպասաւորը որ անուշահոտութեանց հոտէն աւելի պարզեւի հոտը կ'առնէ, իսկոյն զանոնք հիւրանոց կ'առաջնորդէ:

Բժիշկը, որ սպասաւորին պէս ինքն ալ դրամահոտառութեան կողմէ զօրաւոր էր, հազարումէկ կոտորուքով կը խնդրէ որ հանուին տիկիներէն քննութենէ մը անցընելու համար:

— Ինքզինքնիս բժշկական քննութենէ անցընել տալու չեկանք, տօթթօռ էֆէնտի, կ'աւելցնէ տիկիներէն էն թարմը, տաք ապուրին վրայ պաղ ջուր լեցնելով:

— Հապա՞ տիկին ...

— Մեր ազգականներէն խեղճ տղայ մը կայ, որ երբեմն ջղային տազնապներ կուեննայ, պարտքդ տուր կ'ըսէ, եւայն. եթէ այսօր ժամանակ ունիք՝ հիմա խրկենք որ քննութենէ մը անցունէք:

— Ներողութիւն անանկ է նէ, հոգ չէ, զրկեցէք, ամենայն սիրով:

Տիկիները, 3 ոսկի ձգելէ ետք նոյն փրշոտութեամբ եւ հովով կառք կը նստին, եւ շիտակ մեր Գարիկ աղային խանութը կ'առնեն շունչերնին:

Հոս պիտի չնկարագրեմ ձեզ թէ՛ Գարիկ աղայի սիրտը քանի՞ աստիճան նետեց ի տես այս իւղոտ յաճախորդուհիներուն, այլ սա՜ չափ մը ըսենք որ երկու անգամ գետին գլտորեցաւ, ապակի մը կոտրեց, աթոռի մը ոտքը ջախջախեց, տիկիներու ոտքերուն վրայ կոխեց, 15 անգամ խորնարհելէն դուրս ելաւ, ներս մտաւ:

Տիկիները տա կուզենք, նա կուզենք, liste մը կը պատրաստեն բերանացի, բերանը բաց ձգելով Գարիկ աղային:

— Քանի՞ ոսկիի ապրանք եղաւ, Գարիկ աղա:

— 50 ոսկի տիկին:

— Օ՛Ֆ, քիչ է, մենք հարկւր ոսկիի բան պիտի առնէինք, մէյ մըն ալ ո՛վ պիտի գայ, չունի՞ս, ինչ, մատնիներ, պռոշներ չբերե՞ս:

— Բերեմ, բերեմ: Ու խեղճ մարդը իր քրտինքը բազմապատկելով՝ ասդին անդին կ'երթայ, մատնի մը հոնկէ, պռօշ մը ասկէ, վերջապէս առանց ջարշըն վէլվէլէի տալու տիկիներուն ուզածները կը ճարէ կը բերէ:

Եւ հեհաս ժամ զի ճառագայթեցի դէմք Գարիկ աղայի:

Հաշիւը կ'ընէ: « 100 ՈՍԿԻԻ առուտո՛ւր մէկ օրուան մէջ, զօրութեանդ մատաղ Ս. Աստուածածին, պոյիս չափ մում մը քեզի վաղը առտու », այսպէս կ'աղօթէ մտքէն խեղճ մարդը, եւ թուղթը կը ներկայացնէ: Տիկիները առանց անգամ մը իսկ վրան նայելու՝ թուղթը կը վերադարձնեն, մենք այնինչ տոթթօրին քոյրերն ենք, եթէ կրնաս մեզի հետ եկուր, թուղթն ալ հետդ առ եւ հոն տոթթօրը դրամը տայ:

« Փէկ աղէկ » ըսելը եւ կառք գլտորելով եւ ելլելով նետուիլը մէկ կ'ընէ Գարիկ աղա: Եւ կառքը նախորդ տոթթօրին դրան առջեւ կանգ կ'առնէ:

Տոթթօր էֆէնտին, որ բակը կը գտնուէր նոյն պահուն, սիրուն ժպիտով մը կ'ընդունի իր քոյրերը ? !

Ահաւասիկ մարդը, կ'ըսէ տիկիներէն մէկը:

— Լաւ, թող ներս գայ, կը ձայնէ տոթթօրը: Եւ Գարիկ աղա ներս կը մտնէ, իսկ տիկիները ... փեթիկ կը մեկնին: Եւ թատերբեմութիւնը հոս է որ կըսկսի:

— Եկուր նայիմ տղաս:

— Համմէ՞, (ծօ, ինծի տղաս կ'ըսէ կոր):

— Եկուր, եկուր, մի վախնար, ես մարդու բան չեմ ըներ:

— Քեզ ո՞վ ըսաւ որ կը վախնամ կոր տէյի (խե՞նթ է ի՞նչ է):

— Եկուր տղաս լեզուդ նայիմ մէյմը, (իրաւ խենթ է, խեղճ տղայ):

— Լեզու՞ս մի, (իրաւ խենթ է աս մարդը):

— Հա՛, լեզուդ պիտի նայիմ սանկ մէյմը:

— Ես հիւանդ չեմ աղաս, սա փարանտուր նայինք:

— Հա՛ պիտի տամ տղաս, սպասէ, (դը-
րամ պիտի ուզէ ըսին ես՝):

— Շատ սպասեցի ամա, տաս պիտի նէ
տուր որ խանութս երթամ, գործ ունիմ:

— Տամ պիտի ըսի տղաս, (նորէն կը
բռնէ կոր) սա լեզուդ հանէ մէյմը:

— Խենդ ես մարդ, ինչո՞ւ լեզուս հանեմ,
սա պարտքդ տուր, հարիւր ոսկի:

— Տամ, տամ, կեցիր, սա լեզուդ կ'ը-
սեմ կոր, (կը մօտենայ) կուզէ կզակը բռնել:

Գարիկ աղա ոտք կ'ելլէ, տոքթորը ձեռ-
քը կը վերցնէ, Գարիկ աղա ալ պարապ չկե-
նար, եւ հարուած մը կուտայ, տոքթորը կը
պօռայ, ծառաները վեր կը վազեն, կը բռ-
նեն, կը ծեծեն եւ կը կապին Գարիկ աղան:

Արդեօք զնաս մը կրեցի՞ք, մէկ տեղեր-
նիդ ցաւցուցի՞ք: Կը հարցնեն սպասաւորները
տոքթորին:

Ոչ, գիտէի խենդ ըլլալը, արդէն տիկին-
ները ըսին որ հարիւր ոսկի պիտի պահանջէ
քենէ, ան կուզէ կոր, խեղճ մարդ, բայց կը
յուսամ որ կը բժշկուի, պաղ ջուրով կարեցի
է բան մը ընել:

— Քուզում տոքթոր, կ'ըսէ Գարիկ ա-
ղան, ես խենթ չեմ, նայէ խելքս գլուխս է,
սա կապերը քակել տուր տէ իրար հասկը-
նանք, հարիւր ոսկին պարապ տեղը չեմ
ուզեր կոր, միտքդ չէ՞, քուրերդ եկան
ըրգա՛ւ առին:

— Ո՞ր քոյրերս, ես քոյր չունիմ:

— Հէ՞, այդ մատամները քեզի համար
աղբարնիս է ըսին:

— Սուտ են:

— Վա՛յ շուշ . . . (միւս կէսը չկրցաւ
ամբողջացնել, եւ գետին գլտորեցաւ, իրաւ-
ցընէ լեզուն բժիշկին ցուցնել պէտք ունե-
նալով այս անգամ):

Բերա

ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Համեստուհի դպրեքանի

անուշիկ աղբարիկս,

Քա սրտիս թաղթարօշը ճիւղերիմ եավ-
րուս, սա պարիլ ամիսը մօտիկնալուն պէս,

սիրտըս չաթըր չութըր կը նետէր քի, ինծի
խաբելով խաբեւըրելով՝ մահալէ մահալէ,
տունէ տուն պիտի պըտուտցնէին տէի, ազղըն
խօրողներուն սէրսէմ հաւերուն պէս վըրտ-
կած խը՛ըմներս, դրացիներս:

Այս ապրիլին աղւոր մը միտքս պահեցի
քի չի խաբուիմ տէի, չի խաբուեցայ ես:

Անցած երկուշարթի մայիսը եկաւ, բա-
րով եկար ըսի, խախվէիս ճէզվէն քէցի,
էքէցի, կտոր մը հացով թաթախ ըրի, խը-
մէցի, վրայէն գիթիս պուռնութի մըն ալ քա-
շեցի, երեք հէզ հէքու ըրի, փառք քեզ
Աստուած ըսելուս չի մնաց՝ դռանս չախա-
խը չալվեցաւ, բէնճիրէէս ո՞վ կուզես ըսի
նէ՛ պէնկի Դալիդային տունը ա՞ս է տէի
հարցուց. ես եմ ըսի, հաւատալու համար
ալ իքվիիս օրդայի թէկ ղուրուշի խըտար
պէնկս իլէն ծուներու պէս ճէպ ճերմակ կեր-
տանիս վրայի պէնկս ալ ցուցուցի, հաւա-
տաց, ըսաւ քի, Սկիւտար Աճի պատէմ հա-
ճի գթըրբիտս աղաին տունէն քեզի կուզեն
կոր երէք օր լաթ լուալու համար ըսաւ:

Ես գթըրբիտս աղան չեմ ճանչնար կոր
ըսի նէ, մատամները քեզի կը ճանչնան կոր
ըսաւ, շատ մէթ ըրին քեզի ըսաւ:

Կուգամ ամա, Սկիւտար Աճի պատէմ
կացած տեղս չէ, ուրկէց կերթան, Խարա-
կէօմրիւկէ՛ն, Թօպխարուէ՛ն, Պալաթէ՛ն, է-
տըրնէ խաբուսիէ՛ն կերթան չիյտէմ, ինծի
աղւոր մը թարիֆ ըրէ քի երթամ ըսի:

Ըսաւ քի, ասկէց չիտկէ չիտակ քէօր-
բիւն կերթաս Սկիւտարին վաթօռը կը հար-
ցունես, մէջը կը նստիս, Սկիւտար Աճի պա-
տէմ կերթաս, հաճի գթըրբիտս աղաին տու-
նը խարըլ մը չօճօխին հարցունելու ըլլաս նէ
քեզի չիտկէ չիտակ տունը կը ցուցընեն ըսաւ:

Էյ վաթօռի փարայ չունիմ ըսի, երկու
ղուրուշ տըվաւ, բէչէրս վեր սօտտեցի, քիչ
մը հաւայ առնելու համար թօռս ալ մէկ-
տեղ առի, ելայ ճամբայ, չիտակ քէօրբիւ,
Սկիւտարին վաթօռը հարցուցի, թարիֆ ը-
րին գացի գտայ: Պիլէթճի աղա պանա պիր
Սկիւտար Աճի պատէմ պիլէթի վէր ըսի,
օթուղ փարայ վէր ըսաւ, տուվի, Աճի պա-
տէմ պիլէթինի տէ վաթօռտաքի գահվէճի-
տէն ալ ըսաւ:

Վաթօռը մտայ, խախվէճին գտայ, պանա

պիր Աճի պատէմ պիլէթի վէր ըսի, եէրմի փարայ վէր ըսաւ, տուվի քա օրտտի, ինծի հանէց երկու հատ ածիպատէմ խուրապիեէսի տուվաւ, պու պիլէթ տիր ըսի նէ, հէ, սէնի տէյ ածի պատէմէ գատար կէօթիւրիւր ըսաւ:

Աս Աճի պատէմին պիլէթը իլէն Սկիւտարին մուխավաեէ պիլէթը քովիկս դըրի, քա մէյ մըն ալ ի՞նչ տեսնեմ, երամուրճախ չիլ պօղաղ թօռս՝ թօռ թօպ ըլլայ, ածիպատէմի խուրապիեէ պիլէթը կէրէր է, քա եավրում, հիմայ փարայ չի մնաց քի նորէն առնեմ:

Վարօռը Սկիւտար եկաւ կայնեցաւ, անմէն մարդ դուրս ելան, վարօռճին հայտէ վարօռ Ըստամպօլայ կիտէճէք չքսանայ ըսաւ, ես ալ ըսի քի, պէն Աճի պատէմէ կիտէճէիմ, վրաս խնդացին, ույ հէմէն չի տեսնուած օյիններու կան, պիլէթճին իլէն խախվէճին ինծի օյին են ըրեր:

Ելանք Սկիւտար, հիմայ տեղ չիյտեմ ճամբայ չիյտեմ, հարցունելով կիւճպէլայ Աճի պատէմը կըտայ ամա, եօխուչներէն վեր ելելով վրաս հալ չի մնաց:

Հիմայ ասօր անոր հաճի գթըրիեօս աղաին տունը հարցունելու ելայ, որի կը հարցունեմ կոր նէ կը խնդան կոր, ալ տուն չի մնաց հարցունէի, Աստուած պանիկը հաչօղէ, քեամիլ մարդուն մէկը ինծի ըսաւ քի, քուրիկս, քեզի օյին են ըրեր, գթըրիեօս անուն չըլլար ըսաւ:

Ույ հէմէն հանկարծակներու կան, ապրիլ մէկին չի խաբուեցայ նէ ինչ ըրին չըրին ինծի մայիս մէկին խաբէցին:

Նորէն ետ դարձայ իսկէլէն, հիմայ վարօռի փարայ չունիմ քի Ըստամպօլ գամ, շնորքով մարդու մը դլխուս եկածը նախեցի, ապրի մնայ, ինծի մէղքըցաւ տէ պիլէթ մը իլէն երկու հատ սիմիտ առաւ, մէկը ես կերայ մէկն ալ թօռանս տուվի:

Ելանք քէօրբիւն, տալըչս աղջիկանը կընկահարին սանամարը դէմս ելաւ, ուրկէց կուգաս կոր ըսի նէ, ըսաւ քի, Պէյ օղլու Բանկալթի երկու օրէ ի վեր լաթ կը լըվայի կոր քէֆս աւրեցի, հիմայ տուն կերթամ կոր, Աստուած քեզի դէմս հանեց, տանը հինգ ղուրուչ կիւնտէլիք կուտան

կոր, մինակ պուղատաէն պիտի հանէս, տունը Պէյ օղլու Բանկալթի մեր գերեզմանին դէմը էգաճի մը կայ, անոր վրայի տունըն է, պէնկէրդ սիրեմ, հայտէ կնայ տէ պուղատաէն հանէ, բէկ ասըղատէ, բէկ ողորմած մարդիկ են, լաթերնին օրդան չի մնայ ըսաւ:

Ելայ գացի մեր գերեզմանատունը գտայ, Խալաթիաի Անձենայ փրկիչին ժամը, մագէրը ճերմկած կարմիր երեսներով հասուն շնորքով աղւոր չիլման կտորիճ մը բանկալը նստող դաղական էֆէնտի մըն է, անիկայ տեսայ, հարցուցի քի, այս տեղ էգաճի խանութ կայ եղէր, ուր է ըսի նէ, տեղ չի նէլ պիտի տաս ըսաւ, չէ ըսի, անոր վրայի տունը պիտի երգամ ըսի, եկուր հետս ըսաւ, մէեէր ան ալ հոն կերթայ կոր եղէր, դուռը չալեց, պէսլէմէն եկաւ դուռը բացաւ, այս էֆէնտին ըսաւ քի, վեր ելլաս նէ մենծ մանտամին Միսաք աղային փրկիչը մեռնելը չըլլայ որ ղուրցէս ըսաւ:

Ես ալ պուղատաէն լաթէրը հանելու եկայ ըսի, շատ աղէկ ըսաւ, վեր ելանք:

Մեծ մանտամ ըսածս հիւանդ էր, այս էֆէնտին ըսաւ. կէնէ ինքըզինքդ չէս նայէր, պաղեցուցեր էս տէի սրդողեցաւ, ան ալ պաղաէց նախէլ ինչ սէպէպով հիւանդ ըլլալը:

Ես ձեզի հազար անգամ ըսի որ աղբարս Քալիեացոց Հիւանդանոցը ղընէնք նէ, տեսնելու համար երդալ քալը ինծի մօտիկ կըլլայ, ինծի մըտիկ չըրիք, աս հալը ձգեցիք ըսաւ:

Ես ալ գրելու համար մուխուֆ եղայ, աղւոր մը էղածը չէղածը պէրնէն առի:

Քա եավրում, այս կէնճին աղբարը ամսականով փրկիչը դըրեր են, այս կէնճն ալ հիւանդատէսի կացեր է, հիւանդ ցուցունելու վախիթը չէ եղէր, անոր ասոր շատ եավար եղէր է ամայ մտիկ ընող չէ եղէր, մարդուն մէկը մէղքըցեր է տէ ան տէգի մէնծին կընայ ըսէր է, մէնծին ի՞նչ կըսեն ըսէր է նէ՝ Իսրաէլ էֆէնտի կըսեն ըսէր է, կացեր կըտէր է, ան ալ իրմէ մէնծ Իսրաէլ մը կայ եղէր անոր ղրկեր է, ասանք հինը նորին նորն ալ հինին ղրկելով՝ զաւալը կէնճը վորան ելէր ունի եղէր, հաւան ալ ցուրտ է եղէր, պաղ է արէր, պաղ մէգմէններուն

վրայ կայնելով եղբոր օրդան է ելել, զաւալ-
ւը կէնճը կըսէ քի առապան բայթօն էր քու-
բայ ըլլար նէ ճամէրը կը կոցէի տէ անոր
մէջը կը պէքէէյի:

Տասը օրէն ալ աղբարը մէռէր է, հիմայ
իրէն չեն իմացունէր կոր, հիւանդ պառկած
ըլլալուն համար:

Քա ճանրմ օրդտի, ան խօշօր խօշօր պի-
նաները շինողներուն Աստուած երկար օրէր
տայ, չափէն աւելի բարիքներ կընեն կոր,
սա խուեռմճի էսնաֆին ինչու անհոգ կե-
ցեր է, այս Փրկիչին տունը մինակ վանճա-
ռականներունը չէ, ամենունն ուլ տունն է:

Եանի ես սա խուեռմճիներուն մէջէն
քանի մը հոգի էլլան տէ շնորքով օտայի պէս
բան մը շինէնտէ, ճմէռը հիւանդտէսի եկողները
հոն պէքէէն նէ ինչ աղէկ կըլլայ, ես ալ
ան վախթը անմէն կիրամուտքի քիչէրները
խուսկ կը ծխէմ, հայրմէր կըսեմ տէ մեռել-
ներուն հոգւոյն ողորմիս կը հանեմ, ամա-
ռը աղւոր պաղճան քանաքաներ կայ, մարդ
ըռահատ կը նստի ամայ, ճմէռը ան պաղ
մէռմէներուն վրայ կայնէլ տէ պէքէէնը
խօլայ բան չէ:

Քա ճանրմ օրդտի, այս շարթու ալ քեզի
անկարեա մը ունիմ տալիք, խըյմա թաղ-
թասիս օրդան չուխուրցէր է, քեզի ղրկէմ
տէ քէնարները քէսէրով աղոր մը տաշէիր:

ԴԱԼԻԴԱՅ

ՏՈՒՆԸ ՄՆԱՑԱԾ ԱՂՁԻԿԸ

Թէ ինչպէ՞ս նաղելաշուք, շնորհագեղ ու
գեղանին Օր. Նունիկ մարապետ եղաւ,
պատմեմ Ձեզ, ով իմ սիրելի ընթերցողներս,
միանգամայն ներողութիւն խնդրելով ըրած
պօշպօղազութեանս համար, ինչու որ այս
բանը ինձ խոյ մը եղած է, որ միայն (Աստ-
ուած ուշ արասցէ, բերանս վրայ չերթար
կոր) հոգիս հետ մէկտեղ ելլելու գիտաւո-
րութիւն ունի:

×

Մնողացը մէկհատիկը նախիտէն էր նա-
գելաշուքն Օր. Նունիկ, որ իր աննման գե-
ղովն ու վայելչութեամբը, նոյն իսկ երկու ե-

րեսուննոց ամուրիներուն ու աղպղպեղաւարս
Պրառ ինչ գործածելի ի պէտս) երիտասարդ-
ներուն ի խորոց սրտէ ախե՛ր կը բացագան-
չեցնէր, եւ որոնց թուչերն ի վար թուցած
Փանեղայի տակէն կաթկթած ջուրին պէս
ջուրեր կը կաթկթեցնէր, եւ գրեթէ չէր
գտնուեր մէկը որ ի տես իրեն մեղանչէր,
աւետարանական այն պատուէրին դէմ՝ որ
կ'ըսէ « որ հայի ի կին մարդ առ ի ... etc. »
եւ Օր. Նունիկ հպարտ իր գեղեցկութեանը
վրայ, ու մանաւանդ գիտակ այս ամենուն,
այն աստիճան ինքզինքը բարձրերը կը տես-
նէր որ աւելի կուզէր թուիլ քան թէ քալել,
չուզելով նոյն իսկ հասարակ մահկանացու-
ներուն կոխած տեղը կոխել, հարուստները
աղքատ կերեւային իր աչքին, իսկ հսկաֆ-
ները արդէն իրաւունք չունէին իր մարդ
ապրելու, եւ քանի որ, ինչպէս կ'ըսէ առա-
ծը նոյն իսկ « fkor րագրանըն fkor ալըճըսը
օրուր », հետեւաբար այս շեֆեր գույուսի
« րագե րախլան » այնչափ միւշթերի ունէր
որ, ամէնքն ալ ալըճը կեօզիւ ունէին, ո-
մանք անոր սիրտէն առաջ ձեռքը խնդրած
էին, եւ ոմանք ալ ձեռքէն առաջ սիրտը,
սակայն սիգապանծ Օրիորդը եւ ոչ մէկուն
խնդրանքին կատարմանը զիջում ըրած էր,
վասն զի ըստ իր կարծեաց անոնց ամէնքն
ա'լ նիւթական կամ բարոյական ո եւ է պա-
կաս մը ունէին, եւ այսպէս շարունակաբար
միշտ մերժած էր իրեն ժպտող բաղդը:

Այլ սակայն Օրիորդն Նունիկ օր ըստ օրէ
ածէր եւ զօրանայր լի շնորհօք եւ գեղեց-
կութեամբ, բայց եւ այնպէս ամէն մէկ
անցնող ու հինցած տարին իր հնութեան
նշաններէն մին կը գծէր անոր գեղեցիկ դէմ-
քին վրայ, ու անոր գեղեցկութենէն իրեն
ինկած բաժինը մէկտեղ կառնէր կը տանէր,
եւ այսպէս իրարու յաջորդող տարիները
բաւական բան պակսեցուցած ըլլալով անոր
գեղեցկութենէն, գրեթէ այլ եւս զրկած էին
զինքն իր աչքաուու յատկութենէն:

Յայտնի բան մ'է թէ կնոջ մը իտէալն է
միշտ գեղեցիկ, հաճելի, ու գրաւիչ երեւ-
նալ նոյն իսկ իր ամենէն պատուաւոր աս-
տիճանին մէջ, եւ որուն հետեւանքով է որ
այսօր հրապարակին վրայ Փոռնկ իւսթիւ-
պեանի գինը բարձր ու կայուն ըրացա մը

ունի, եւ արդէն Օր. Նունիկ սկսած էր կամայ ակամայ տեղափոխել միւշքերի մը ըլլալ նոյն արթիֆօյիսին, եւ գրեթէ ամէն շաբաթու թուարկին տուփը կը փոխէ ուրիշ մը գրտն ելով ու միշտ առարկելով թէ այս թուարկան երեսս չի բռներ կոր, միւսը կը փակչի կոր, եւայլն եւայլն, եւ այսպէս երանելի մամունաները կը վերածուէին փողի, ո՛հ փողիգ գեղեցկութեան, փողիգ գունափոխութեան (բանաստեղծական), ուրեմն ի՞նչ կը մնայ ընել այլ եւս ինձ բազմամեղիս, որ զիս փողի մը տեղ իսկ չը դնելով, այդ քաղցրահունչ (բառ ինչ գործածելի ի հարկաւոր ժամու) դրամները ինձ չեն տար, բայց եթէ անձնասպ... (չախա կ'ըսեմ չը պիտի կրնամ ըլլալ):

Եւ Օր. Նունիկ աւաղելով կաւաղէր իր անցեալ գեղեցկութեան վրայ, որուն նեկիծեմ իսկ ամէնէն հաճոյաւթ բանն էր արգիլեալ պտուղին թխսօղազներուն համար, եւ վերջապէս երբ առաջին անգամ ըլլալով ուզեց յայտնել իր սիրոյ զգացումներն միւսիւ կարապետին, որուն հետ կը փափաղէր գործադրել դրամսին մէջ դրուած օրէնքը, միւսիւ կարապետ ամենայն լրջութեամբ պատասխանեց ըսելով՝

Կը խնդրեմ օրիորդ, դուք ըսէք, քաղիք փիլիգ ետիրախին գտնուած ատեն թուոյն դրուած ետիրախով տօյմա կը դրո՞ւի միթէ:

Եւ այն օրէն որ մերժեց զինք կարապետ, Աղջիկ Նունիկ ուխտեց ըլլալ մարապետ:

X

Հետեւութիւն.

Միշտ աղջիկ մը աղւոր սիրուն գեղեցիկ Պէտք չէ ըլլայ հպարտ ճիտտայ ու թացիկ:

Եւ երբ յարմար բաղդ մը խնդայ երեսին Զգուշանայ ընել հպարտ խօսքեր սին:

Պէտք չէ ըսել աս նիմի է աս անհամ Զի տարբերի գեղն ու չնորհ ամէ ամ:

Ով որ չըներ իմ այս խրատս լաւ մըտիկ Գիտցած ըլլայ վերջը կընէ տուն տիտիկ:

Սկիւտար

ԵՐՄՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

46 տարու պէս մը

Հանտոնի Ուէսպուրկի բարեսիրական հաստատութեան մէջ, վերջերս 46 տարու պէս մը իր մահկանացուն կնքեց:

Այդ pensionnaire յիշեալ հաստատութեան մէջ ընդունուած էր մէկ տարեկան հասակին մէջ, Այդ տարիքէն սկսեալ, անոր Ֆիլիքական ու մտաւորական բոլոր կարողութիւնները կասած էին: 46 տարիներու երկար ժամանակամիջոցին մէջ ենթական կատարեալ պէպէքի մը վիճակին մէջ մնացած էր, այնպէս որ պզտիկ տղու մը պէս կը հագուեցնէին ու կը խնամէին զայն: Առանձին ուտել չէր զիտեր եւ ստնտուի մը ներկայութիւնը միշտ անհրաժեշտ էր քովը: Զէր կրցած երբեք խօսիլ ու քաղել սովորի:

Չուկերը ապրեցնելու մեքոս մը.

Այս նորութիւնը, որ եզական է իր տեսակին մէջ, մեծ յեղաշրջում առաջ պիտի բերէ ծովային կենդանիներու ապրելու կերպին մէջ:

Գիտնական մը, երկար ու բարակ խուզարկութիւններէ յետոյ, յաջողեց է վերջապէս ծովու ձուկերն անուշ ջուրի մէջ ապրեցնել:

Ասոր համար, ծովու ձուկեր առնելով, զանոնք աղի ջուր պարունակող ընդունարաններու մէջ պահած է, եւ անոնց մէջը հետզհետէ անուշ ջուր լեցնելով, ծովու ջուրին աղիութիւնը աստիճանաբար նուազած է, մինչեւ որ բոլորովին անուշ ջուրի վերածուելով, մեծ գոհունակութեամբ դիտած է թէ ծովու ձուկերն ալ կրնան անուշ ջուրի մէջ ապրիլ ու բազմանալ:

Մեր գիտնականը կը կարծէ թէ այս եղանակաւ կարելի պիտի ըլլայ գետերուն մէջ ձողաձուկեր, տառեխներ, լեզուաձուկեր, թիւնիկներ, օձաձուկեր ելն. առաջ բերել, կը բաւէ որ անուշ ջուրին ապրելու վարժուող ձուկերը նետուին գետին մէջ, ուր աճելով պիտի աճին եւ բազմանալով պիտի բազմանան, ըստ Ս. Գրգի վկայութեան:

Միեւնոյն փորձը կատարած է նաեւ անուշ ջուրի մէջ ապրող ձուկերուն վրայ, եւ միեւնոյն յաջող արդիւնքը ձեռք բերած է զանոնք ծովու ջուրին մէջ վարժեցնելով:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻԶՄԻՐ. — Արեւելեան Մամուլի Պոլսոյ թղթակիցը կը գրէ թէ՝ «Հանրագիտակ» ՎՈԼԹ-ՖԱՍ ըրած է Չըլատեան վարդապետի խնդիրը, և կը յանձնարարէ «Հանրագիտակ»ի ֆրոնիկագրին կարգաւ Չըլատեան վարդապետի հրատարակած նամակը «Սուրհանդակ»ի մէջ։ Անշուշտ «Հանրագիտակ» այս մասին բացատրութիւն մը կուտայ։

Ծ. Խ. — «Հանրագիտակ» պնդեց և կը պնդէ թէ՝ Չըլատեան վարդապետի մասին Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդէն ԵՐԲԵՔ որ եւ է աննպաստ գըրութիւն զրկուած չէ Պատրիարքարան, ընդհակառակը, թէ՝ Բարթող Փաշա և թէ Թաղ. Խորհրդոյ գիւանադպիրը վիշտ ու ցաւ կը յայտնեն որ ձրի զըրպարտութիւն մը եղած է իրենց անունով։ Ուրեմն «Հանրագիտակ» ճշմարտութիւն մըն է որ երեւան կը հանէ և իրաւունք ունի պահանջելու որ վոյդ-ֆաւ ընեն ամէն անսնք, որոնք այդ տեսակ անգոյ նամակի մը գոյութեան արձագանգ եղած են անճարակ կերպով։

ՆԻԻ-ԵՕՐԲ. — Թաւշանճեան էֆ. և վրանքացագիրն Յ. Արփիար իւրարու դէմ սոսկալի կերպով բռնկած են երկու չոր փայտերու պէս։

Ծ. Խ. — Թող Թաւշանճեան էֆ. ի վաճառած հաստը խալիններէն մէկուն մէջ փաթտուին որ կրակը չուտով մարի, և եթէ ծանր այրուցքներ ալ ըստացած են թող քիչ մը իւղատին։

ԲԵՐԱ. — ՀՈՐՈՅ լեզուական խընդիրներ կը յուզէ։ Կը պահանջէ որ

«գինի» «գինույ» գրեն ասկէ ետք գըրագէտները փոխանակ «գինի»ի։

Ծ. Խ. — Ըստ մեզ՝ ամէնէն լաւ միջոցն է հին գինին հին լեզուով հոլովել, և նոր գինին ալ նոր լեզուով։

ԲԱՐԻԶ. — Մ. Քոնսթանթինի հընարեց նոր տեսակ մը ինքնաշարժ կօշիկ, որ հազիւ վեց քիլօ ծանրութիւն ունի և որուն շնորհիւ ասկէ ետք կարելի պիտի ըլլայ մէկ ժամուան մէջ 70—60 քիլօմէթր ճամբայ կտրել առանց քրտնելու։

Ծ. Խ. — Մ. Քոնսթանդինի թող իսէր ուսանողութեան հաճի վեց զոյգ այդ կօշիկներէն մեր կաղմական «ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ ՎՐԱՅ ԵՂՈՂ» կանոնագրին նուիրել։

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ. — Օրաթերթերը ցանկ մը հրատարակած են Պատրիարքարանի պաշտօնեաներուն ամսականի յաւելման նկատմամբ։ Այդ յաւելումով իբրեւ թէ գիւանադպիրներուն ամսականները 800 զրուշի բարձրացած են։ Բոլորովին սխալ է այդ լուրը։ Մենք կը ճանչնանք գիւանադպիրներ, որոնք, յաւելում չեղած արդէն 800—850 զրուշ ամսական ունէին, յիշենք ասոնցմէ Հայկեան, Փափաղեան, Բիւրքճեան և Եփրեմ էֆէնտիները, որոնք այժմ պիտի ստանան ոչ թէ 800 զրուշ այլ 950—1000 զրուշ ամսական։

Ծ. Խ. — Այդ ցանկը հրատարակութեան տուողներն ալ անշուշտ իրենց հաշիւը ունին այս հաշուական գործին մէջ։

ՕՔ ՆՈՔ

ԼՈՔՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԾՈՔ

Վաղը կիրակի Մհեր Գրիգոր
Դպրապետը մեր ձայնով մեղմ ու գոռ
Եռաձայն պիտի ընէ Մայր Տաճար,
Ասկէ տարբեր մէկ չգտնելով ձար:
Ընթերցող, աղուոր չըլլա՞ր մի երբոր
Մեր Խորասանձեան Աւետիսն գեր փոր
Գոչելով ուժգին *avanti musique*
Դաշնակը ածեւ էր դուրս ալ յուզուիս:
Հարիւր իրան հաս մանչեր եւ աղջիկ
Հոն պիտի քափեն իրենց բոլոր ճիգ
Ծիշք երեք ձայնով երգելու համար
Միշտ ամեն ասեւ ձեռք քեւամար:

X

Անցած կիրակի Ս. Պատրիարք հայր,
Պատարագ մատոյց Գուրու Չեչմէ վայր:
Եւ հոն խօսեցաւ քաղաք մը յորդ որ՝
Կը պարունակէր գեղեցիկ յորդոր:
Տեղացիք սաճարնին կուգէն շինել,
Բայց դրամակներ ճարձքայ մ'է անել:
Ս. Պատրիարք Հայրը հոնկէ քաժմըներ
Տալով հոս ու հոն մէկ փանի նրէր:

X

Նկարագրել ձեզ կը փութամ հիմայ
Սինանեան ֆոնսհոն այն հոգեւորմայ,
Որ ծափեր խնց անկեղծ յիրաւի
Մեզմէ, նուագի տենչոս ծարաւի:
Գովելու համար կը պակսին քառեր
Եղբայրներն որ գործին են փարեր
Մէկ սիրտ մէկ հոգի: Մասներով ճարտար
Դաշնակ ու ջութակ կարծես կը խայտա՛ր:
Համիսիյէի յետոյ փայլերգէն,
Աշխոյժ եղբայրներն անոյժ կ'երգեցեն:
Եւ պէրդ, Սեն սայեն, Հայտն, Լալօ, Վեպեր,
Թըռան ու զացին դէպ ի վէս ամպեր,
Հապա օրիորդը՝ Սինան Վերոնի'կ
Որ ձօնը կ'ըլլայ սաղիս իրոնիկ,
Արուեստագէտի յայտնեց նորք ճաշակ
Երբ շատ վարժ ածեց պոչաւոր դաշնակ:

Արդիւնքն ալ կ'ըսեն այս հեշտ բօստեռին
Հազուագիտներէն է մէջ իր սեռին:

X

Այն որ միջոններ կը բաշխէր բեմէն
Ապշեցնելով դիտողներն ամեն,
Այսօր ինկած է մէջ խեղճ վիճակի
Գրեթէ կարօտ հացի կրակի:
Հասկցա՞ք ով է, դերասան Չափրաս
Որ չունենալով ոսկիներ պատրաս,
Զի կրնար տկար խեղճութեան ճիւղ,
Զինքը հասցնող օրէ օր աւաղ:
Անշուշտ իր բեմի կեանքին հիացող
Ամեն զբաւէր իրեն պաղտիկ ցող
Կը բարեհաճի հասնիլ օգնութեան
Որ յանկարծ չըսուի « մեռաւ դերասան »:

X

Գարահիսարի Տեր Գ. ք Ճարպիկ,
Որ բուր ըլլայ փառանայ ճարպիկ,
Ներում կը խնդրէ Ս. Պատրիարքին
Որ իր ծերունի տարիք յարգէ
Եւ ապաշխարանք յոժեղով արագ
Տայ հրաման կրկին ընել պատարագ:
Տէր պապաւ, երբոր կուգես որ գովեն
Ինչո՞ւ կանցնիս կոր մեղքերու ֆովեն:
Հանդարտ չնստի՞ս անկիւնը վանքին
Նեւեղով գինի եւ սնունդ անգին:

X

Սինկերի քացած նոր ցուցահանդէս
Գեղեցիկ գործեր կան դրուած ի տես:
Կտոր մը պողպատ շարժումով ոսփին
Կ'արտադրէ, հրա՛շք, նուրբ քանուածփին:
Մեր ձանձրոյթ արեւն կ'ընդունի կանանց
Կա՞յ արդեօք ասկէ շաւաղոյն ժամանց:
Թո՞ղ երթան, տեսնեն, հարցնեն, սորվին,
Չեռագործերը նուրբ բոլորովին:
Սինկեր վարչութիւնն երբ ըլլայ հարցում
Զի մանրամասն կուտայ գոհացում:

Գ.

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեօի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն սակրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, գնահատուած համբաւաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դարկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով:

50—42

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂ ԲՆԱՅ

Արսնց, Կանսնց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց բեշուքներու և տղայոց շիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—36

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՝ փնասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մազերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եւ



ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ Ճերիտիի Վեգաիի Թըպպիյի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառաջ շիկ ջուրեր պատրաստելով իրեն տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մազերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուանոթեան վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մազերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ս. Սօղանճեան ստորագրութեան:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօղի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանաչ և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլծայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-27

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ի

Ա Յ Ս Մ Ա Ս Ը

ՏՐԱՄԱԳԻՐԵԼԻ Է ԾԱՆՈՒՑՈՒՄԻ